

4986

Up to January 1st
of 1906 by Amherst College

891.99

U-13

Aug 10
1895

BK

2011

12003

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱԲԻԼԵՆԸՆՑ

ՄԿԻՋԻ ՀԱՐԱԿԻՔԸ

Ձարս մի գործողութեամբ

ԲԱՐՈՒ

Տիկարան „ԱՅՐՈՒ“

1895

891.99

Ա-13


391.99
Q-13

~~Q. P. - Պատմութեամբ~~

ՄԿԻՃԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Ֆարս մի գործողութեամբ

Հեղինակութիւն Ալէքսանդր Աբէլեսնցի:



ԲԱԳՈՒ
Տպարան „Ա. Բ Օ Ր“
1895.

29429-4-2

~~B. H. D.~~

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՒՆՔ

ԱԲՐԱՀԱՄ ԱՊԵՐ Գողատէր. միջին հասակի
մարդ, ասիական շորով:

ԽՕԶԱ. ԱՐՁՈՒՄԱՆ մի գիւղացի:
ԱՆԹԱՌԱՄ նրա կինը, աներում բանող:
ՄԿԻՃ Արքանամ ապկրի ծառան:

Անցքը պատահում է Բաքվում, 1884 թ.

Ծանօթուրինեն: Որ ձայնաւի վորրա զրած է շեշտ
նշանը (՝), պէտք է այն ձայ-
նաւորը հնչել մեղմ։ Շամափիփի
բարբառում բացառականը վեր-
ջանում է ա'ն, ան, նան եւ այ
մամիկներով։



12435-58 g

Настоящій водевиль подъ заглавиемъ
„Свадьба Микича“ разрѣшено Г. Глав-
ноначальствующимъ къ представлению
на сценахъ края. Октября 5 дня 1895 г.
г. Тифлисъ.

За Предсѣдателя Комитета
А. Кшишишевъ

Секретарь Н. Меликѣ-Нубаровъ

ԲԵՄԸ ՆԵՐԿԱՅԱԳՆՈՒՄ է ԿԷՍԱՍԻՎԱԿԱՆ ԿԷՄԵՐՈՎԱԿԱՆ ՑԱՇԱԼՊ
ԴԱԲԻՓ: ՄԷՋՏԵՂ, աշ եւ ծախ դռներ: ՍԵՂԱՆՆԵՐԻ ՎՐԱ զոյգ
զոյգ լամպեր: Աշ պատի մէջ պատուհան, որի առաջ սեղանիկ
ծաղկամանով: Երեկոյ է:

ՏԵՍԻԼ 1.

ԱԲՐԱՀԱՄ ԵՒ ՄԿՒՃ:

Ա.ԲՐԱՀԱՄ

ՏԵՍԱՆՈ՞ւՄ ԵՍ, ՄԿԻԾ, առանց կնկայ տունը ինչ
դժոխքի է նման: Պատերը ինձ ուսում են: Ես ասացի
բարիկենդան է, Շուշանը այսօր կփոշմանի յետ կգայ:
Բայց չէ, սիալիում եմ: Ես շատ էլ հոգս չեմ անիլ:
Գնամ մի լաւ ձուկ առնեմ բերեմ, խորովի՞ր ուտեմ,
կարմիր գինին խմեմ, տեսնեմ օրներս ինչպէս է
անցնելու: Սյատեղ լինես: (Գնում է միջի դռնով):

ՄԿԻՃ

ԽԵԽԱ ապէր: Դուշը¹ զա' ֆա'սա'ն² փախալ ա,
մնացալ էս էրմիլով: Ինձ հարցունէս, մէղայ Ասսու,

¹ Թռչունդ. ² Փանդակից.

ուզումամ լափ¹ ասամ, տէղն ա: Մալթս պէտկանամ
պա'նի լա'ւ ֆիքիր² անի: Ալչան³ լա'ւ պտուղա,
համա դէ⁴ նրա չըհասածը այնա⁵ մին զահրմար⁶:
ի'ւրի'ւշ պա'նա' նրա հասածը. որ տինխմէս էրկու
ազուխտ⁷ արանքըմը հուպտամ, շրախկոցը գէօդ-
նա'⁸ պա'ցրանըմ: Տի'ւ ապէրս. ասա ինքիտ մէծ
հօրս եաշըմը⁹, քինա'ցա'լ էս մին կնիդ էս առալ քի
ուու հա'լա' հէրու չէ մէկալ տարի փայիղին¹⁰
տասնութումը տիբաւ: Իլի'ր Մկիճի պէս. ինքիս
քսանիօխտ տարական, ախչիղա'մ սիրա'լ երեսնօխտ
տարական: Դէ ուղորթա, էքուցվան օրը ա'նա'նց¹¹
կնիդի ա'թա'նց¹² (Խրան ցոյց տաղով) տղին կթողնի,
քու Շիւշա'նիտ պէս հէրանց տուն կը փախչի: Հա'ր¹³
պա'նիս ա'լ ա'թա'նցա: Մակով, խէլքով, խիտրու-
թունով¹⁴, ջուվալքաղութունով¹⁵: (Տիւրելով): Ու'ֆ.
պէրանս հախա¹⁶ ուրախ ա խօսը, համա¹⁷ սըրալս
մըխկըտամա: Քու հօր տունիդի բարբադ¹⁸իլի սէր:
Տիւրզիտ¹⁹ մին ա'լա'մա'թ²⁰ ցաւ էս: Քեզի տես-
նամ քի գա'րզա'մահ²¹ իլէս. սատկէս, տմկէս, չօ-
րանաս, տիզ իլէս կըզէս դուվարան²², ա'լ պուք
շի կա'ս: Ա'չի²³ ա'չա'բ²⁴ իսաթի²⁵ չընդա'նք:
Տրանա առաջ սիրահարվողնէրի վէրա' կծըաղի:

¹բոլորսին. ²մուածուն' թ, ³լորբ. ⁴բայց դէ. ⁵իսկական. ⁶թոյն,
Դազորիք ատամիդ. ⁷երկինք է. ⁹հասախմար. ¹⁰աշխանլ. ¹¹ այս-
պէս այսպէս. ¹²ամէն. ¹⁴խորամանգութեամբ. ¹⁵չարամութեամբ.
¹⁶թէս. ¹⁷բայց. ¹⁸աւերակ. ¹⁹դուիկդ. ²⁰զերբնական. ²¹ցաւամահ.
²²պատից. ²³այ մարդ. ²⁴լաւ. ²⁵դժոխտութեան.

Հիմիդ քի ինձ ամ միտիդ անըմ, լափ ծէր արեւ,
ծըծաղ քի չէ, խէխչս ա կա'մ ինձ, խէխչս: Ակոր Մկիճը
հո՞վ, սէրը հո՞վ: Մկիճը հօրդէ⁹, Անթառանը հօրդէ¹⁰:
Տէս պա'նի հօրդէ ա հասալ, քի Անթառանիս վէրա'
շարադրանք ամ կիրա'լ

ՏԵՍԻԼ 2.

ՄԿԻՃ ԵՒ ԱՆԹԱՌԱՄ:

Ա.ՆԹԱՌԱՄ

(Միջի դոնով ներս զաղով): Բարի երեկոց
տեսանք այ Մկիճ:

ՄԿԻՃ

Պարիւզի'ւն, Ասսու պարին: (Կողմ): Ուրախ-
թունաս սըրալս պլաոց տուրաւ: Խէր¹ իլի, այ
Անթառան: Ա'ս ժամաժամքին ա'լի հինչ կայ:

Ա.ՆԹԱՌԱՄ

Ուրախութիւն է. աչքդ լոյս: (Ծիծաղում է):

ՄԿԻՃ

Լիսող Ասսոծը քէզիդին ուրախ պահի. լիւսով
կէնաս: Ծըծաղըմէ²ս:

¹Բարի.

ԱՆԹԱՌԱՄ

Բարիկենդամ է, ուրախ եմ:

Մ Կ Ի Ճ

Աստոծ քէղի պարի կէնթան պահի: (Կողմ):
Փառք Աստու:

ԱՆԹԱՌԱՄ

Ապէրը տանն է:

Մ Կ Ի Ճ

(Surtēg): Բա՛ս ապէրին հի՞նչ էս անըմ:

ԱՆԹԱՌԱՄ

Եկել եմ հիւր կանչեմ:

Մ Կ Ի Ճ

Հըմ: Քինա՛ցա՛լա՛ ծի՛ւզն առնի: Հա՛րա՛ս:
Կիկա՛ւ: (Պառւզա:) Անթառա՞ն:

ԱՆԹԱՌԱՄ

Հըմ:

Մ Կ Ի Ճ

Ախր ես սպասիլա՛ն մէռայ:

¹—⁴Հօրէս կգայ.

ԱՆԹԱՌԱՄ

Ուհ: Ե՞րբ ենք պրծնելու քո ձեռքիցդ:

Մ Կ Ի Ճ

Մի՛ տանջիլ, խէխճ ամ: մէխիկ ամ, տիվէր
Աստոծ կայ:

ԱՆԹԱՌԱՄ

Էհ, չեմ իմանում դու էլ խելքդ ինչ ես տանել
տուել:

Մ Կ Ի Ճ

Խա՞չ իմ ցէքիս չի: Ինձանա իլի չամմանըմ՝
քի հինչ կանամ: (Անթառամ ծիծաղում է): Մի՛
ծըծաղիլ: Տա սէր ա, տա զարաֆաթ² չի: Սիրողը
խէլքն ալ տանիլ կտայ, ի՛ւրա՞ն ա՛լ: Տէս ա՛լ
պա՞նի Աստոծ հօրէլէ³ ա հառացուրալ քի, մօտիս
իրէսիս աբուրպ⁴ մըռացալամ: Ա՛լ մէռուն, ամօթ,
հարկ չի մնացալ ինձէտի:

ԱՆԹԱՌԱՄ

Ես չեմ իմանում դու ինձանում ինչ⁵ ես գտել:
Հազարներով աներում աղջիկներ կան պառաւած,
քո աչքդ հէնց ինձ է տեսել: Փառք Աստոյ, փեսա-
ցուն ցերեկը ճրագրվ են վնասում հօ:

¹Չեմ իմանում. ²կատակ. ³որտեղ է. ⁴ամօթը.

Մ Կ Ի Ճ

Ես ալ քեզ ամ ճրաբով շուռ¹ կամ ա՛լի²:
Իւան տեղով մին սակի, որ իմ սէրս քէզիգին ա՛
ձօ' կա'լ³: Հի՞նչ անամ:

ԱՆԹԱՌԱՄ

Տեսնող խօսողները ի՞նչ կասեն:

Մ Կ Ի Ճ

Առաջնի պա՛նի մեր մէջին թաքուն կլօխ
կ'պէրանք: Երկուխնջինի⁴ քի Ասսանայ թաքուն չի,
բա՛նդիան⁵ ա՛մ վախիլի՛ւ: Ա.սըմա չախկալդան⁶
քօյի՛ւդ⁷ ասլան⁸ վար⁹:

ԱՆԹԱՌԱՄ

Իմանում ես որ մարդիս լեզուն չար է լինում
եւ շատ անդամ թացն էլ չորի կրակով է էրժում,
Մկիձ:

Մ Կ Ի Ճ

Հարկս հարկաց, պատիւս արժանաւորաց:
Հասկանըմամ մըսկըս: Լափ արխէյին¹⁰ իփ քի,
նայ ալ իմ ցէքիս: (Պառւզա.) ԱՆԹԱՌԱՆ:

¹ման. ²լի. ³շոկել. ⁴երկրորդ, ⁵մարդկանցից. ⁶ 7 8 9 աղու-
էսից մեծ առիւծ կայ ¹⁰միամիտ.

ԱՆԹԱՌԱՄ

(Կողմ): Ոչ ամուսինս իմանայ: (Մկիձիմ):
Ի՞նչ կայ:

Մ Կ Ի Ճ

Ալսր քէզ հէտի¹ մին շարադրանք ամ կիրա'լ:

ԱՆԹԱՌԱՄ

Հիմի ամէն մի ծառայ էլ շարադրող է դարձել
եթէ գու էլ Մարտիրոսենց ծառայի նման ես գրել,
թող միայ:

Մ Կ Ի Ճ

Նա հինչի² վէրա'յ ա՛ կիրա'լ:

ԱՆԹԱՌԱՄ

Սկսողի:

Մ Կ Ի Ճ

(Միծաղից բուշանալով): Բա քու տունիգիդ
Աստոծ շնի, ԱՆԹԱՌԱՆ աղջիկ: Ա.քա² լա՛ս սխառըի
մասին ա՛լ պա՛ն կիկիրա՛ն: Հա, հա, հա: Իմիգի³
մին ա՛լա՛մա՛թ պա՛նա՛յա՛:

¹թէզ համար. ²Ալքածածած բառի կրծատած, աղջիկ. ³Քնքա-
ցրած «իմ» բառը, իմիկ.

ԱՆԹԱՌԱՄ

Դէ մին կարդա տեսնենք:

ՄԿԻՃ

Նայ ալ ի'մ ցէքիս: (Հանում է զրպանից փողաման. որի միջից խնամքով եւ ձեռքերն ու ժիրը սրբեղով հանում է մի բույր): Անգօջ¹ տի՛ր տէ՛ս հինչ սրբախ կանձ խօսկեր առ: (Սիսում է կարդալ):

«Մատ այիս, Մազէրա ա հի՛ւլօ՛ր հի՛ւլօր²,
 «Պէ ռա պո, Պոզնէրս կըլօր կըլօր:
 «Ժամի տուռնան³ լէն ուսերիս,
 «Մատաղ արա, ա՛ս⁴ Մկիճիս:

ԱՆԹԱՌԱՄ

Քո գրածդ էլ զիր կապելով ես կարդում:

ՄԿԻՃ

Հեօվսա՛լս⁵ արա՛: (Կարդում է):

«Անթառանս հաւ կ'խաշի,
 «Հողի մէշան ճիւր կըաշի.
 «Հաստ կռնէրը սրբա կմաշի,
 «Մատաղ կանի ա՛ս Մկիճին:

¹Ականչ. ²ոլորուն. ³դոնից. ⁴այս. ⁵համբերութիւն.

«Տափը սիստա՛գ նախշ ունքերիս,

«Շէկ մազերով խելունք կըլիփս.

«Տեղին խունգի երգան¹ վիզիս,

«Թող փթաթվի ա՛ս Մկիճիս:

«Ճակաստ ա ոսկի հէյլի²,

«Ես Մէժլում ամ, տի՛ւ մին լէյլի³.

«Որ քէկ հազար սիրող իլի,

«Ցէքտ մէկնիր ա՛ս Մկիճիս:

«Ես ծէր բախչին⁴ բաղ⁵ ամ ասըմ,

«Եկ քաշանք դամաղ⁶ ամ ասըմ.

«Զեարգա՛րի պէս հաղ⁷ ամ ասըմ,

«Ցէք մի քիցիլ ա՛ս Մկիճիս:

«Մ'ասկլ Մկիճ ունքտ ծուռա ,

«Տիւ եկ սրտիս միտիգ արա՛.

«Աստոծ կանչի՛ր ազօթք արա՛,

«Արժանանաս ա՛ս Մկիճիս:

Հինչպէ՞ս էր:

ԱՆԹԱՌԱՄ

Լաւ էր: Բայց մի տեղ մազերիս սեւ ես ասում,
 միւս տեղ չէկ:

ՄԿԻՃ

Շատ ալ խթին ին չան քինա՛լ: Մէրան⁸

¹Երկար. ²հայելի. ³պարսկական «լէյլի Մէժլում» պօնմայի հերոսներ. ⁴պարտէզին. ⁵այզի. ⁶զուարծութիւն. ⁷երդ. ⁸սիրուց.

Քոռացած մարթը սեւ սիպտա՛դ կ'կարի¹ ճօ՛կի՞լ²
Ծա՛ն² ա՛լ ալրա՛լա՛մ: Ուղումքս մին զիմղիմա՛³
անամ:

Ա.ՆԹԱՌԱՄ

Բարիկենդան է, բաւ կ'լինիւ Երգի՛ր մին ուրա-
խանամք: (Ծիծաղում է):

Մ Կ Ի Ճ

(Վերցնումէ սասիկ բարձր ձայն եւ երգում):
«Ճակատոսա՛ ոսկի՛ . . . » Պահ շատ պա՛ցիր
վեկալս: (Վերցնում է շատ ժաշ եւ հինգ մի նօսաի
վրա կանգ առած երգում է). «Ճակատոսա ոսկի հելլի,
ես մին Մէժլում, տիւ մին Լէլլի. . . » (Լսվում է
Աբրահամի հազո՞ղի ձայնը):

Ա.ՆԹԱՌԱՄ

Վայ ապէրը եկաւ:

Մ Կ Ի Ճ

(Զշելով, զզացված շարունակում է): «Քեզ
հաղար սիրով իլի՛ . . . »:

¹կարող է. ²ձայն, եղանակ. ³հանդարս Երգել, նուազել,
զուարճանալ.

ՏԵՍԻԼ 3.

ՄԿԻՃ, ԱՆԹԱՌԱՄ ԵՒ ԱԲՐԱՀԱՄ
(Մևում է միջի դռնից):

Ա.ԲԲԱՌԱՄ

(Չուկը ձեռին): Ձայնդ անսպառ, այ ուստայ⁴
Մկիճ. ձայնդ անսպառ:

Մ Կ Ի Ճ

(Լսում է եւ կողմ): Խոտէ ան ասալ քի՛ ²ոօ՛հ-
բա՛թին չերին վախտանդա, մօլթանի գա՛լզի քի
Ալլա սախլասուն»⁵: Ներողութիւն ապէր:

Ա.ԲԲԱՌԱՄ

Բան չունես: «Ներողութիւն»: Մին ճրագ
վառի՛ր:

Մ Կ Ի Ճ

Նայ ալ իմ ցէքիս: (Վառում է մի լամպ):

Ա.ԲԲԱՌԱՄ

Անթառա՞մ: Ի՞նչ կայ:

¹կարպետ. ²—⁵Առակ «Խօսակցութեան քաղցր ժամանակ,
մօլթանին մտաւ թէ բարի լոյս».

ԱՆԹԱՌԱՄ

Մարտիրոս ապերը խնդրեց չորսն բերեք
իրանց մօտ:

ԱԲՐԱՀԱՄ

Ի՞նչ կայ.

ԱՆԹԱՌԱՄ

Ոչինչ. բարիկենդանն է, այնտեղ պաս բռնելու:

ԱԲՐԱՀԱՄ

(Խորամանկօրէն): Խօսք չկայ որ Շուշանն էլ
այնտեղ է լինելու: Հա՛, հա՛, հա՛:

ԱՆԹԱՌԱՄ

Դէ որ իմացաք էլ ի՞նչ ասեմ:

ԱԲՐԱՀԱՄ

Այդ լուրիդ պատասխանը մին աչքալուսի է
որ ասումեմ քեզ: Քո էլ աչքդ լոյս, մարդդ եկել է.
փողոցում լսեցի:

Մ Կ Ի Ճ

(Ճրագլ վառած Տեղակիուելով): Պարի՛ւղի՛ւն
ապերիս:

ԱԲՐԱՀԱՄ

Աստծոյ բարին: Տե՛ս այս ձուկը ինչպէսն է:

Մ Կ Ի Ճ:

(Հոս անելով): Փա՛հ. շատ զանազաննա:
(Դնում և մի կողմ):

ԱԲՐԱՀԱՄ

Ձեռ չտա: Մնայ կտանենք Մարտիրոսանց
տուն, այնտեղ կուտենք: Սա լաւ եղաւ. պասը
այնտեղ կրնենք, մեր տան կ'բացենք: Ա Մկե՛ճ.
հինգ իմանաս մի քիչ կազում ես:

Մ Կ Ի Ճ

Հրամերէս ապէր. ոսս բի՛ւղի՛ւրմիշա՛ւ¹ իլալ:

ԱԲՐԱՀԱՄ

Խօսքը ժամանակին կգայ: Անցեալ տարի
բարիկենդանին չէ՞ր որ կարծեմ էլի մի այդպիսի
բան պատահեց քեզ:

Մ Կ Ի Ճ

Հա սալղաթի² կոէվը³:

¹Այթաքել. ²— 1881 թվ սրբակ թուրք եւ ոռու ամբոխի
կոփը.



Ա.Բ.Բ.Հ.Ա.Մ

Ի՞նչ կորւ: Նստի՛ր Անթառամ: (Նստում են
բացի Մկիածլ):

Մ Կ Ի Ճ

Բօնդուրի¹ կոէվը:

Ա.Բ.Բ.Հ.Ա.Մ:

Հա. պատմի՛ր տեսնենք նա ինչպէս բան էր:

Մ Կ Ի Ճ

Նայ ալ իմ ցէքիս: Ուռուսը տա՛սա՛ն² էր
կա՛մ, թուրքը տա՛նա՛ն³ Մեք ալ մէր դուվարի⁴
տակին թամաշա ինք⁴ անըմ: Թուրքը քի շատացաւ,
զու առաւ ուռուսը փախաւ: Ուռուսը փախաւ, մեք
խառնվեցինք: Մին թուրքի կնիգ վերաս եկաւ,
ես իղինքիս⁵ ետ քաշէցի, թուրքի կնիգի մօտացաւ:

Ա.Բ.Բ.Հ.Ա.Մ

Տեսնումն⁶, Անթառամ, ինչ տեսակ կնիկար-
մատ է եղել:

Մ Կ Ի Ճ

Զալըմ⁶ կնիկ էր: Համամչի⁷ խանըմը նրա

¹ տակառագործի. ² այս կողմից այն կողմից. ³ պատի. ⁴ հանդիսատես էինք. ⁵ անձս. ⁶ բաշ. ⁷ բաղսիսպան.

մօտին, մուկնի հա՞քի: Մօտացաւ դեօշիս¹ տախտա-
կին մի՛ն լափաշկայ²: Մէշկլս³ տուրի դուվարին
ոսս պա՛րցրացուրի քի թա՛վիգո՛վ⁴ փորին կուպ-
ցոնսամ, ոսս փոնեց: Ոսս փոնեց, հինչ փոնեց:
Քաշեց քաշեց, մին խէլյա՛գ⁵ տէղ տարաւ. ես ալ
ա՛ն մին ոտիս վէրա՛ տընգլի տալով—տընգլի⁶
տալով քինա՛մա՛մ: Բիրդա՛ն⁷ ոսս լափ պա՛րցրա-
ցուց կպցրուց լափ քիթիս: Բիրդա՛ն քուռուչ
տուրաւ ինքի փախաւ, ես տունդուռուզիս⁸ վէրա՛
կպց տափին:

Ա.Ն.Թ.Ա.Ռ.Ա.Մ

(Սասիկ ծիծաղելով): Ի՞նչ աներեսն է եղել:

Ա.Բ.Բ.Հ.Ա.Մ

(Նոյնպէս ծիծաղելով): Յետո՞յ, յետո՞յ:

Մ Կ Ի Ճ

Կոխքս հախա⁹ կոսրվէց, համա¹⁰ վեր կացայ
տրա քամագան¹¹ մի՛ն սալբանդ¹²: Զումուշկը
թողացաւ փախաւ: Ես չումուշկը վէ կալայ, մին
սալբաթ փոնեց բօղաղաս¹³:

¹ կըծքիս. ² ափտակ. ³ մէջըս. ⁴ բացիով. ⁵ բաւականի. ⁶ միտով
վրա ոստոսելով. ⁷ յանկարծ. ⁸ ետևիս. ⁹ թէլ. ¹⁰ բայց. ¹¹ ետևից.
¹² սալ. ¹³ շնչափողիս.

ԱԲՐԱՀՈՅ

Նա ինչու՞:

Մ Կ Ի Ճ

Ես ալ հա՛նց նայ ամ ասըմ քի, ա՛գա՛նա՛մ¹
 թուրքի զիւս ա՛մ², ա՛ն կնիզի ինձի հինչի շիքա՛ստ³
 արաւ, ա՛գա՛նա՛մ ուռուսի զիւսամ, ա՛ս սալդաթը
 ինձի հինչի⁴ա խէսարըն: Հա՛րնա՛իսա՛⁵. անօրան
 տա՛մնա՛ կովկս ա՛թա՛նց⁶ զի՛ւզի՛ւրդ⁷ մնաց ալր
 (Զեռին բուղը երեւնում է):

ԱԲՐԱՀՈՅ

Այդ ի՞նչ թուղթ է:

Մ Կ Ի Ճ

(Շըշկրիւած:) Հի՞նչ: Հը՞՛: Հի՞նչ թուղթ:
 (Թարգնում է):

ԱԲՐԱՀՈՅ

Ել մի՛ պատահանձուիլ: Տեսնեմ:

Մ Կ Ի Ճ

Ոտերիզիս տակին ապաղճապաղ⁷ անամ ապէր,
 մին ա՛ս սա՛ֆ' ար⁸ բախշիր:

¹Եթէ. ²Եղողիմ եմ. ³անդամալոյժ. ⁴ինչև է. ⁵այսպէս ։ ⁶զրկված.
⁷թռթռալ. ⁸ա՛վ զամ.

ԱԲՐԱՀՈՅ

Մկիճ, դու մին լաւ տղայ ես. դու վաս բան
 անել չես կարող ասա՛, մի՛ վախիր. ախր ի՞նչ է, ի՞նչ:

Մ Կ Ի Ճ

Պարի ապեր. իրէսիզիս մի՛ պա՛ցիլ. համան-
 չըմամ. կնիկարմատ կայ:

ԱԲՐԱՀՈՅ

(Անքառամին): Կնիկարմաստ ։ Գնա՛ միւս սեն-
 եակ: (Անքառամ զնում է աջ դռնով): Դէ ասա՛.
 մի՛ վախիր:

ՏԵՍԻԼ 4.

ԱԲՐԱՀՈՅ ԵՒ ՄԿԻՃ:

Մ Կ Ի Ճ

Ապեր, թուղթը տալը տալու ամ, համա առաչ
 մին քանի խօսկ ունամ:

ԱԲՐԱՀՈՅ

Դէ շուտ արա՛, գնալու տեղ ունենք:

Մ Կ Ի Ճ:

Ապեր, աւետարանան կլօխու լա՛ւ ա՛ տի՛ւս
կա՛մ:

Ա.Բ.Ր.Ա.Հ.Ա.Մ

Աւետարանը այնպէս գիտեմ որ եթէ մին մաւ-
խաթ էս երեսից անց կացնես մինչ միւս երեսը,
ևս կիմանամ թէ Մատթէոսի որ զլխով է անցել,
Մարկոսի որ տնով, Ղուկասի որ բառով, Յովհան-
նէսի որ տառով:

Մ Կ Ի Ճ:

Այ ապրի ապերս:

Ա.Բ.Ր.Ա.Հ.Ա.Մ

Ապա դու ինչպէ՞ս էիր ճանաչել ապերիդ:

Մ Կ Ի Ճ:

Բա՛լիյա՛՛:¹

Ա.Բ.Ր.Ա.Հ.Ա.Մ

Բայց դու փորացաւդ չասացիր:

¹Ինարկէ

Մ Կ Ի Ճ:

Զիմ ա՛լ¹ մեղաոր մահկանացու անք:

Ա.Բ.Ր.Ա.Հ.Ա.Մ:

Խելօք խոռք էր: Բայց ցա՞ւդ:

Մ Կ Ի Ճ:

Ապեր, իմ ցաւս մին ա՛լա՛մա՛թ ցաւ ա: Համ
քաղցր ա, համ տա՛ռնը: Իմ ցաւս, ապեր, մին
ա՛նա՛նց ցաւս քի. հինչքան իւրի՛ւշի չամ ասլմ,
հինչքան թաքոն ամ պահլմ, ա՛նքան հօքիս փա-
ռառորդլմա. սըրտըս ուռչում: Հպարդանլմ ամ.
կոռողանլմ ամ. ա՛լ չամ ուզում քի մին դանա՞
մարթի իրէս տէմնամ: Բա՛զ³ վախու ալ ուզում ամ
ինձ ծովը քիցա՛մ խէլխտամ: Համա վախլմ ամ կա՛ն
մէլիղիա⁴ վերա՛յ ծըծաղան, ոտով կուպցլնան, ասան
տրա ըսրիխն մտիգ արա՛, տայցալ ուսում առածների
ջա՛րգն ա՛բ⁵ ուզացալ ընդնի: Վախլմ ամ վերաս
ծըծաղան:

Ա.Բ.Ր.Ա.Հ.Ա.Մ

Օ՛. անձնասպանին մեծ պատիժ կայ արքայու-
թիմումը:

¹Ալմնքս էլ. ²հատ. ³երբեմն. ⁴դիակիս. ⁵շարքն է.

Մ Կ Ի Ճ

Ապեր, ուղօ՞րթ ա քի մին կնիդ աղ ա իլա՛ր:

ԱԲՐԱՀԱՄ

Ինչպէ՞ս չէ. Դովտի կնիկը:

Մ Կ Ի Ճ

Բա՛ս աւետարանը աղի մասին հի՞նչ ա՛ ասլմէ

ԱԲՐԱՀԱՄ

Ասում է «Եթէ աղն համեսցէ, ի՞ւ համէ»:
Ուրեմն թէ առանց աղի կերակուրին ի՞նչ համ:

Մ Կ Ի Ճ

Նա աղի մասին ա՛ ասը՞մ:

ԱԲՐԱՀԱՄ

Առակ է, Մկիճ, առակ, Դու էլ ես աղ, ես էլ
եմ աղ, կնիկն էլ է աղ:

Մ Կ Ի Ճ

Մաշալայ¹ ապեր. վէրչը լա՛ւ պերիր, մաշալայ:

ԱԲՐԱՀԱՄ:

Ի հարկ է առանց կնկայ տունը ի՞նչի կ'նմանի:

¹Գովելի.

Այ քեզ օրինակ մեր տունը: Արա համար էլ ասում է
«մի՛ դատէք»:

Մ Կ Ի Ճ

Հի՞նչ:

ԱԲՐԱՀԱՄ

Թէ ուրեմն կնիկ ուզողների համար էլ ահեղ
դատաստան կայ:

Մ Կ Ի Ճ

Օհ պա՛ները տիժա՛րա՛ցաւ:

ԱԲՐԱՀԱՄ

«Զի արձակեալն շուն է»: Արձակ համարձակ
կնիկ ու զողը շուն է:

Մ Կ Ի Ճ

Բա՛ս ա՛լ զուռնիով հարսանիքի հօ՞րնա:

ԱԲՐԱՀԱՄ

Ասացի քեզ որ ամեն բան առակով է. չէ՞ որ
«երկնքի թռչնին իւր հացը նշանակված է»:

Մ Կ Ի Ճ

Տա լա՛ւ է՛ր:

ԱԲՐԱՀՈՅ

«Զի ես եմ վրէժինդիր: Ես եմ ալֆանն եւ
օն»: վրէժ կառնեմ ասում է:

Մ Կ Ի Ճ

Օ՛ տիմա՛րա՛ցաւ:

ԱԲՐԱՀՈՅ

«Տէրի անունը օրհնեցէք զնծղաներով եւ դա-
փերով եւ զուռնիով»:

Մ Կ Ի Ճ

Տա լա՛ւ էր:

ԱԲՐԱՀՈՅ

Դէ հիմի ասա՛ տեսնեմ:

Մ Կ Ի Ճ

Իրէսս չի կա՛մ:

ԱԲՐԱՀՈՅ

Ասա՛. ասում եմ: Ուրեմն ես քեզ համար
ո՞վ եմ:

Մ Կ Ի Ճ

Մին ա՛նա՛նց գիմոթուն ալ ես ամ ուզում
անամ: Ասսանայթաքուն չի, քեզանայ հի՞նչթաքուն:

ԱԲՐԱՀՈՅ

Բայց կնիկը օձ կլինի, թէեւ Աստուած
շնորհաւոր անի:

Մ Կ Ի Ճ

Կնիկ ա՛լ կայ, կնիկ ա՛լ:

ԱԲՐԱՀՈՅ

Զա՛րդա՛րը ասում է «դատ կնկանից, դատ
կնկանից»:

Մ Կ Ի Ճ

Էրված տեղն ա իլա՛լ ասալ ա ալի:

ԱԲՐԱՀՈՅ

Բատ հարսնացուդ ո՞վ լինի:

Մ Կ Ի Ճ

Ես իմ չափս չըմացողը չամ: Իմ սիրա՛ծս
Անթառանն ա:

ԱԲՐԱՀՈՅ

(Փոքուկացնում կ եւ իրան զապում): Ի՞նչ, ո՞վ
(Կողմ): Բա՞ս նրա մարդը:

Մ Կ Ի Ճ

Ապեր իսկի մի՛ ծըծաղիլ. տա սէրա. տա
զարաֆաթ¹ չի:

ԱԲՐԱՀԱՄ

(Կողմ): Սրանից մի ծիծաղալի պատմութիւն
կարելի է զլուխ բերել. Մկիճ. ի՞նչ կ'տաս հենց էս
գիշեր ամեն բան իմ ձեռքովս զլուխ բերեմ, քեզ
պակեմ վերջացնեմ:

Մ Կ Ի Ճ

Ախ ապէր. ոտերտ ճի՛ւր կանամ կ'խմամ.
մատերս ճրաք կանամ առաջիտ կ'վառամ: Էշտ
կիլամ. հօրդէ ուզես, լնդէ կապի: Համա վախս
տայ ա քի² հարսանցուս սապլաս³ չիլի:

ԱԲՐԱՀԱՄ

Ե'կ, Մկիճ, թողնենք այս բանը:

Մ Կ Ի Ճ

(Կողմ): Ա.արմա «Աղբլլըմըլիօջա Մարքա՛րա՛րա՛,
օդա չախր իչա՛ն⁴:»: Ապէր, դէ ասա՛ վի՛զիտ
կըտրըմ ամ ալի:

¹կատակ. ²որ. ³համաձայն. ⁴Առակ. «խելօքներս պ. Մար-
զարը, նա էլ զինի խմող».

ԱԲՐԱՀԱՄ

Դէ լաւ, ես էս բոպէիս հարսնացուիտ համո-
զեցնեմ:

Մ Կ Ի Ճ

Լա՛ւ. ապէր. բա՛ս հարսանիքիս հինչքա՞ն
միս կուտովի. մին փութ բօլա՞⁵:

ԱԲՐԱՀԱՄ

Էհ. ի՞նչ ես ասում. որ չուտեն նա էլ շատ է:

Մ Կ Ի Ճ

Որեմն մին 5 զի՛ւրմա՞նքա՛ բօլաւ:

ԱԲՐԱՀԱՄ

Ի հարկէ: Դէ զնա՛. ես նրան կանչեմ համողեմ:

Մ Կ Ի Ճ

Ախը մին պա՛նա՛մ ֆիքիր⁶ անըմ:

ԱԲՐԱՀԱՄ

Հը՛:

Մ Կ Ի Ճ

Տի՛ւ ասըմես «մին փութը ա՛գա՛նա՛մ չուտան,

⁵բաւական է. ⁶մտածմունք.

նայ ալ շատ այ. ախր ես վախըմամ ուտան, նայ ալ
քիչ իլի:

ԱԲՐԱՀԱՄ

Դէ. ասած դու, նայ ալ իմ ձեռքիս: Ամեն
հոգը իմ վըղիս:

ՄԿԻՃ

Զան ապէր, ջան, ջան: Դէ մնացածը տա քեզ
կափ: (Ցոյց է տալիս բուղը և տալիս Աբրահամին.
գնում է ձախ):

ԱԲՐԱՀԱՄ

(Կանչում է): Անթառամ:

ՏԵՍԻԼ 5.

ԱԲՐԱՀԱՄ ԵՒ ԱՆԹԱՌԱՄ

(Անում է աջ կողմից):

(Մի փոքր բղրին նայում է, ծիծաղում, և ցոյց
տալիս Անթառամին):

Այդ ի՞նչ է:

ԱՆԹԱՌԱՄ

Ես ամենը գիտեմ: Գիտեմ եւ այն ինչ որ դուք
գիտէք եւ ինչ որ պիտ ասէք:

ԱԲՐԱՀԱՄ

Մին բան եմ ինդրելու պէտք է չմերժես:

ԱՆԹԱՌԱՄ

(Կողմ): Տէր, դու չարը խափանես, բարին
առաջնորդես:

ԱԲՐԱՀԱՄ

Այս գիշեր պէտք է Մկիձի հարսնացուն դառնաս:

ԱՆԹԱՌԱՄ

Ապեր ու՞զում ես ամբողջ քաղաքում խօսակ-
ցութեան եւ ծաղրի առարկայ դառնա՞նք: Միթէ՞
մեղք չէ:

ԱԲՐԱՀԱՄ

Առաջինը մեղք չէ. որովհետեւ ասված է
«բարիկենդանի օրերումն զանազան խաղեր արէ՞ք
եւ միմիանց ուրախացրէք: Հարսեր դրէք էշի
վրա կամ սուտ սուտ հարսանիքներ արէք եւ ծիծա-
ղեցէք»: Սա մէկ եկար, ո՞վ իրաւունք ունի խօսել
բարիկենդանի հանաքների վրա: Հենց սաղմոսն էլ

ասում է, «ուրախացէ՛ք սէլա՛» եւ կամ թէ «ալէ-
լուիա»։ Այսինքն եւ Աստուած կտեսնի իւր ստեղծ-
վածների քէֆը եւ կասի «սէլա՛» այսինքն «շատ
լաւ պա՛հ պա՛հ»։

ԱՆԹԱՌԱՄ

Եթէ Աստծոյ ընդգէմ չէ, թող ձեր ասածը լինիւ

ԱԲՐԱՀԱՄ

Այ օրհնեալ լինեաւ Մկիճ։ (Մկիճ ներսից:
«Համեմ»)։ Այսուղ ի՞նչ ես անում։ (Մկիճ ներսից:
«Զուիվլումամ»)։ Լաւ, այսուղ ե'կ հարսնացուդ հա-
մաձայն է։ (Գնում է աջ դռնով)։

ՏԵՍԻԼ 6.

ՄԿԻՃ ԵՒ ԱՆԹԱՌԱՄ

ԱՆԹԱՌԱՄ

Չ'պրծանք ձեռքիցդ էլիւ

ՄԿԻՃ

Վերչը փափուզեցի՞ր

ԱՆԹԱՌԱՄ

Կնես ապերի մատաղը

ՄԿԻՃ

Իլա՛մ քու մատաղու Հիմի՞ ա՛լ չես թօղնիլի՛ւ
մօտանամի։

ԱՆԹԱՌԱՄ

Մինչեւ անթառամ պսակո չ'լինի, մօտենալ չ'կայ

ՄԿԻՃ

Տի՛ւիզիստ ինձ էսի հա՞նց Անթառան էս ալիւ

ԱՆԹԱՌԱՄ

Չեմ սիրում քեզ կողքատ ծուռ է։

ՄԿԻՃ

Գէնարալ կայ ոս չունի։

ԱՆԹԱՌԱՄ

Ասում են վախկոտ ես։

ՄԿԻՃ

Խա՛նչա՛լս¹ հա՛րա՛ն² աշխանըմը³ չարփայիս⁴
կլիսան կախ արած։

¹ Դաշոյնս. ² ահա. ³ խոհանոցում. ⁴ մահմակալիս.

ԱՆԹԱՌԱՄ

Ասում են պատկած ես:

ՄԿԻՃ

Հա հա հա: Ես թուրք ամ իլա՛լ ինքիս պա՛նա՛
բէյլա՛բա՛ր¹: Հա հա հա: Ես վախըմ ամ տիւ փսակ-
ված չիլէս: Հա հա հա:

ԱՆԹԱՌԱՄ

Ասում են ուզեցել ես մալական դառնաս:

ՄԿԻՃ

Կա՛րմի՛ւր կինիա՛ն ա՛մ քուշտացա՞լ: Եօխսա²
բօրչնամ³ սիրա՛լ:

ԱՆԹԱՌԱՄ

Ասում են խմող ես:

ՄԿԻՃ

Նա Քեասպա՛րին տե՛ս:

ԱՆԹԱՌԱՄ

Ասում են թուղթ խաղացող ես:

¹անտեղեակ. ²թէ. ³ապուր.

ՄԿԻՃ

Մեղայ Ասսու ա՛զա՛նա՛մ¹ քի փորձըզվածը²
տանձանոցան³ ձօ՛կիլ կարամ:

ԱՆԹԱՌԱՄ

Ասում են գող ես:

ՄԿԻՃ

Նա գիժ—Բալասին տե՛ս: Պրծա՞ր

ԱՆԹԱՌԱՄ

Պրծայ. հիմայ տեսնում եմ որ ամենքն էլ
զրպարաել են:

ՏԵՍԻԼ 7.

ՄԿԻՃ, ԱՆԹԱՌԱՄ ԵՒ ԱԲՐԱՅԱՄ

(Աջ դռնով գալիս է):

ԱԲՐԱՅԱՄ

Հը չպրծա՞ք:

¹Եթէ. ²փոսիկ. ³տանձիկ խաղանդթի անուներ.

Մ Կ Ի Ճ

Ապէր. յիմի ըմացայ քի ա' ս խեխճըմը մէխկ
չ կայ: Մ'եր փախըլ¹ հայերը պա'ն չի մնացալ քի
վերա'ս չ սարքան, քի ես զումարբաղ² ամ, պիա-
նսկայ ամ³, կո'ղ ամ, տայ ամ, նայ ամ: Աղա ասողի
սըրտին գիւլլա'⁴ կպչի: Ասողը առնը մընա⁵, թա'ր-
թա'փիլ⁶ անի, գի'ւլլա'խըրով⁷ ի՛ի, տեւաժարլի⁸:
Ասողի բարան⁹ կոնդլկծիկ¹⁰ իլի: Նրա օխոը պօրտը
տուռնաց տուռնի հաց հաւաքի: Ա' գա'նա'մ գօղրուն¹¹
խօսող ա, կա' իրէսխա ասի:

ԱԲՐԱՀԱՄ

Լաւ, մի' չարանալ Մկիճ:

Մ Կ Ի Ճ

Զէ դա, ապէր. մեք ալ մին մարթի տղայ անք:
Մ'եք անք զարաքաթի¹² քիցիմ, ախր եադօղլին¹³
մին հի'ւշտի¹⁴ ա' բա'նդ, քի պա'նա'ն պա'ն տիւս
պէրի:

ԱԲՐԱՀԱՄ

Դէ լաւ գնա' կանաչ կարմիրդ կապի'ր. օրը
անցաւ: (Մկիճ գնում է ձախ դոնով): (Տաղիս է

¹ Եախանձու. ² Խսաղամօլ. ³ Արքեցող. ⁴ Գնտակ. ⁵ Արինում մնայ.
Թոթուայ. ⁶ Պնտախորով. ⁷ Պեաժարիլ. ⁸ Ապազը. ¹⁰ Կաթուածահար.
¹¹ Ճիշտ. ¹² Կատակի. ¹³ Օտարորդին. ¹⁴ Նշանի.

բանալին Անրառամին): Ա' ո կամօղի բանալին: Դու-
էլ գնա' զուգվի'ր թէ չէ քեզ չի սիրիլ: (Անրառամ
գնում է աջ):

ՏԵՍԻԼ 8.

Ա Բ Ր Ա Հ Ա Մ Մ Ե Ն Ա Կ

ԱԲՐԱՀԱՄ

(Զախ դուան մօս): Մկիճ. մեր պատական
օրէնքը ոսնատակ չանե'ս, ձիք գտակս կ'գնես:
(Մկիճ ներսից. «Բա'ս իմ զալարանդիս² իի երկու
մանեթ վեց շա'հինով ամ առաջ»): Մօգան ինձ դու³
ես սովորցնելու: Թուրս էլ կ'բերես որ կնքահայրդ
եմ լինելու: Ի՞նչ կայ անքում ես: (Մկիճ ներսից.
«Զա'միան ներս⁴ հուվի ա տամ»): Դէ շուտ արա':
(Մօտենում է աջ դուան): Օրիո՞րդ, դու ի՞նչ ես
անում: (Ներսից Անրառամի ձայնը. «Բանալին չի
ընկնում»): Պա կնիկարմատ. բանը քեզ մնայ,
գիշերը պէտք է այսաեղ լուսացնենք: (Գնում է աջ):

1 արիբալդի գտակ. 2 կոշիկներս.

ՏԵՍԻԼ 9.

Մ Կ Ի Ճ Մ Ե Ն Ա Կ

(Մտնում է ձախ դռնով):

Մ Կ Ի Ճ

(Երկարաբեր չուխայ, կանաչ կարմիր բաշ-
կինակները խաչաձեւ կրծքին սեղրած, մի ձեռին
բռւր, միւսում վառած կիսա մոմ: Երկար կոշիկ-
ներով, մի չիր երկար բաշկինակ զօսից կախ, ձի՛
գտակով, թշերը կարմրացրած):

Փառք Քեղ Տէր, փառք Քեզ: Վէրչը հասանք
մեր մուրազին:¹ Ուզորմած հոքի մեծ մերս կասէր
«առօռւտ վեր կացար մին հրաժարամ ասա՛»: Ասօր
ասիլիս, Անթառանս աշկիս մին իրեւեց, ասեցի
Տէր ողորմեա՛: Հիմի հինչ կա՛րմի՛ւրա՛լա՛ թուշերու-
լսփ, շամախեցիի ասած, թուշաս մում կ'վառվին
(Յածր ձայնով): Խօսկը մէր մէջին,² խանըմիս քիրշա-
նան³ ամ կօ՛ղացալ: Ասսու պա՛նի ըմանալ չիլիք:
Հօ՞լ էր ըմանըմ քի ա՛ս քիշէր իմ փրսակս պետկա
իլէր: Համա Աստօծ ա՛նա՛նց պէրմունք արաւ քի

¹ուխտին. ²տիկնոջ. ³երեսի քսելու կարմիր սընզուր.

դիւշմա՛նիս ըռէխը ճղեց: Նրա պա՛նի ըմանալ չիլիք:
Տիւ տէ՛ս փայիղի¹ քամազան հինչպէս ա կուպցրալ
ամառնը, ամառնի քամազան բահարը², նրա քամա-
զան ծմեռնը: Հիմի Անթառանը քի ինձ տեսնի
ա՛թա՛նց չարչախուստին³ կեցված, աշկին չի հաւա-
տի՛ւլի՛ւ: Կաչկիւ ա՛ վիզա՛ս պուք չի կա՛լիւ:
Եարաք Անթառանիս պէս ալ կնիկ կայ աշխար-
քըմըս, ջան ա ջան: Հիմի գուռնիս ծա՛նը լիսողները
հարցնի՛ւլի՛ւ ա՛ն քի «տա հի՞նչ ա՛», տա հի՞նչ ա՛»:
քի հարսանիք. «Աղա տա հու՞մ հարսանիքն ա՛»:
Մկիճի: «Աղա հի՞նչ Մկիճ»: Աղա գիւմա՛շ Մկիճի
Բա՛գա՛ իմ անըմըս գիւմա՛շ՝⁴ արնողը սարսաղա⁵
իլա՛ւ:

ՏԵՍԻԼ 10.

ՄԿԻՃ ԵՒ ԱՆԹԱՌԱՄ

(Թասակրաւով աջ կողմից մտնելով):

(Անթառամ կեղծ լացով որպէս թէ արտաս-
վում է): Տա հիմիղվանան հի՞նչ գիլամներ⁶ էս
թափըմ: Մի՛ լա՛ց լիլ. ամօթ ա. ուրախութունին
լա՛ց չան խաննիլ:

¹Աշխան. ²զարմանը. ³շքեղ հազւած խառն. ⁴գոմէշ. ⁵յիմար.
Շիռաս

ԱՆԹԱՌԱՄ

Ինձ համար պէտք է թանգագին շորեր առնեաւ:

Մ Կ Ի Ճ

(Կողմ): Ես ալ ասեցի տեսնես հինչի ա' լա' զ
իլիմ. (Անբառամին): Կառնամ, հինչի⁵ չամ առնիլ.
Կաննի' մին մակարիա¹ քինա' մ:

ԱՆԹԱՌԱՄ

Ժամացոյց եմ ուղում, կոնի ոսկի եմ ուղում:

Մ Կ Ի Ճ

Նայ ալ իմ ցէքիս: Ամիսի հինդ մանէթը հու՞մ
էտի ա' մ առնըս:

ԱՆԹԱՌԱՄ

Ես փայտոնով եմ ման զալու:

Մ Կ Ի Ճ

Սաղ² իլի Բախիշ դայլա³. հո՞ր օրվան փայ-
տօնչի⁴ դայիս ա' :

ԱՆԹԱՌԱՄ

Ակնոց եմ դնելու, հովհար եմ բռնելու:

¹Մակարիի տօնալանառ. ²ողջ. ³քեռի ⁴կառապան.

Մ Կ Ի Ճ

Ա' ջա' բա' լ¹ կանես. լա' ւ ա' լ կ' սաղի:

ԱՆԹԱՌԱՄ

Երկար լէյֆ² եմ կարել տալու, զիսարկ եմ
դնելու:

Մ Կ Ի Ճ

(Կողմ): Տրա տօգերն ա³ իլա' լ, ես բէյխա' բա' լ⁴:
(Անբառամին): Ա' չի⁵ քեզ բալ⁶ ալ կ' տանամ, հի՞նչ
ֆիքիրի⁷ էս: Համա Անթառան. տէրտէրի առաջին
կա' բմբի' ւլի' ւ ա'նը է:

ՏԵՂԻԼ 11.

ՄԿԻՃ, ԱՆԹԱՌԱՄ ԵՒ ԽԾՉԱՅ ԱՐՁՈՒՄԱՆ

(Միջի դռնով):

Խ Օ Զ Ա Յ Ա Ր Զ Ո Ւ Մ Ա Ն

Ընթառանը ըստէ⁸ դ ա: (Քիչ առաջ է զայիս
եւ կանգնում):

¹Լաւ էլ. ²ձիք փեշեր. ³եղիւրներ, ⁴անտեղեակ ⁵այ մարդ.
⁶պարահանդէս. ⁷մասածունը.

Մ Կ Ի Ճ

Հի՞նչ «Ընթառան ա»:

Խ0ԶԱՅ ԱՐՁՈՒՄԱՆ

Մըէր օղբաղը:

Մ Կ Ի Ճ

Հի՞նչ «օղուշալ ա»:

Խ0ԶԱՅ ԱՐՁՈՒՄԱՆ

Մըէր տնացին:

Մ Կ Ի Ճ

Հի՞նչ «դնացի»:

Խ0ԶԱՅ ԱՐՁՈՒՄԱՆ

Մըէր խոխոց մա'րը:

Մ Կ Ի Ճ:

«Խոխոց մա'րը» հի՞նչ ա' :

Խ0ԶԱՅ ԱՐՁՈՒՄԱՆ

Բմբօ՛. «Էտ հի՞նչ ա', էն հի՞նչա՛» թա՛ վէ՛րն ա՛,
իմ կնէկս ըմ օղըմ է՛, իմ կնէկս:

¹Ընսանիք.

Մ Կ Ի Ճ

Բա՛ զա՛մ կնդանտ զարօռուլչին¹ ի՞նք:

Խ0ԶԱՅ ԱՐՁՈՒՄԱՆ

Պա դէ հին² գլուշա՛մ: Ասըմըն էն ա Ա'պրա՛մ
աղին տանը:

Մ Կ Ի Ճ

Բա՛ս մարիֆաթա³ Աստոծ կտրի: Հարսանիքի
տուն էս մտալ մին Աստոծ չնօօր անիի տէղ, կնդանտ
կռեւն էս բաշտամիչ⁴ արալ:

Խ0ԶԱՅ ԱՐՁՈՒՄԱՆ

Ըմբօ, էտ հի՞նչ հարսանիքի սօ'հրա՛թ⁴ ա'.
Կնէկս ըմ օղըմ է, կնէկս: (Անբառամ ձեռինով բե-
րանը բռներով, ուզում և իոջայ Արզումանին
հասկացնել թէ լոկ): Ըմբօ՛, ըմբօ՛: Էտ հու Ընթա-
ռանն ա: Ախչի էտ խէ՛ մատըչկայ ըմ⁵ տա՛ռա՛լ:

Մ Կ Ի Ճ

(Ծիծաղում է): Հա հա հա: Ա'ս մարթըմը
խաթա⁶ կայ! . . . : Այ դըբըմ⁷ չնական. տա իմ
հարսանցուս ա քի:

¹Ապահապան. ²բաղաքավարութիւնդ. ³սկսել. ⁴խօսակցութիւն. ⁵տիկին. ⁶դժբախտութիւն. ⁷կոպիտ.

ԽՕՉԱՅ ԱՐՁՈՒՄԱՆ

(Սպառնալիս): Էյ. ես իմ կնէկո ծէքառ
առնողին. . . .

ԱՆԹԱՌԱՄ

(Ծիծաղում հ): Վայ սիրսս գնաց:

Մ Կ Ի Ճ

(Անթառամին): Մի՛ վախիլ, մատաղ իւա՛մ
մի՛ վախիլ: Ապէ՛ր. լնդէան¹ մին թաս² ճիւր պէ՛ր
հարսս ի՛ւրա՛նա՛³ քինա՛ց:

ՏԵՍԻԼ 12.

ՄԿԻՃ, ԱՆԹԱՌԱՄ, ԽՕՉԱՅ ԱՐՁՈՒՄԱՆ ԵՒ
ԱԲՐԱՀԱՄ

(Ա. ջ դ ռ և ի ց):

ԱԲՐԱՀԱՄ

Այդ ի՞նչ է պատահել: (Ննատեղով Խօջայ
Արզումանին, մինչ Մկինը Անթառամին փաղա-
շումն, Արտահամը համոզում է Խօջայ Արզումանին
որ նա լոհ):

¹Այն տեղից. ²բաժակ. ³իրանից.

ԽՕՉԱՅ ԱՐՁՈՒՄԱՆ

Պա դէ անաշէն իտի էլ ասի՛ լիի՛ Բարիկեն-
թան ա վէշինչ: Էտ հիւր¹ տղայ ա: Զառւշ Ռը-
տամին տղա՞ն չինի:

Մ Կ Ի Ճ

Ես ամ: (Թուրը տալիս է Արտահամին, մուլը
Անթառամին):

ԽՕՉԱՅ ԱՐՁՈՒՄԱՆ

Կիր օնիս: (Գրապանից մի նամակ հանելով
տալիս է Մկինին):

Մ Կ Ի Ճ

(Առնում է նամակը եւ նայում կնիքին).
Փէշառը² աշկիս սեւ ա կա՛մ խէր³ իլի: (Բացում է
եւ կարդում): «Գթառատ եխապայր իմ. Մկիճ ապե-
րիս քոյրական ողջուն»: Քի՛ւրս ա՛ կիրիմ. կիրա՛ծ
կիրիտ մեռնամ ա Գիւնազ (Շարունակում է կար-
դալ): «Զա՛ռնչան աղարաջիս⁴ օ՛մրը⁵ քէզ բախչեց»:
Լիսա՛լ ա՛մ, ուղօրմի իւ՛րա՛ն. լա՛ւ ջան էր» (Կար-
դում է): «Մա՛մա՛ն ասըմ ա լիսա՛լ ա՛մ. Մկիչը
պապըս ա քաշըմ. կիրի՛ աշկներս լիւսի. չնօօր իլի»:
Ախ այ փախը⁶ հայեր: Եա՛նի տայ ալ խա՛բա՛ր⁷

¹Ում. ²կիրը. ³բարի. ⁴նոր հարս. ⁵կեանքը. ⁶նախանձուս.
⁷լուր.

տալի պահանա՞։ (Կարդում կ): «Դադաշն¹ ալ ութ ամիս էր ոսնահեղի² էր ընդպալ. փորացաւան պահարա' գա'լ էր չօ'փ կը տըրվալ: Մէք հալա ընդպալինք. փող չ'կար: Անցկացած շա'պա'տ դադաշը մէ մէ... մէռալ այ. . .»: Վայ դադաշս վայ: (Թուղացած նատում է մի արողի վրա եւ լալիս): Վայ դադաշս վայ: Սխր ես հանց արազը տեսսալ ի: Սխր հանց իմ սըրտըս մին ըշխին էր տուրա'լ: Դադաշս վայ, դադաշս վայ: (Թուղը ձեռից ընկնում կ): Տարինը տաճաներկու ամիս արա նրա տուռնըմը գիւլով⁴ միաք⁵ պիժա'նող դադաշս վայ: Ասօրվան օրը տի՛ւ պէտկ ա մինիկ դանա⁶ Մկիճիտ հարսանիքին⁷ մակարները կանչի՛ր: Հակառակի պէս իմ ուրախութունիս սուքըշվան⁸ խառնող դադաշս վայ: Ես ա'ս զա'րիբ⁹ աեղըմը ծեղ էտի ա'մ չալըչ⁹ կա'մ: Աշկա հո՞վ կապեց այ դադաշ': Աշկիտ սեւ սիպտա՛գ Մկիճիտ քեզ զուրբա՛ն¹⁰ իլի՛: Ա'ջա'բ¹¹ եթիմ¹² մնացինք այ Գիւնադ քի՛ւրիգի՛ւ: Լա'ցիտ լա'ցիս խառնի՛ այ Անթառան, այ ապէր: (Արգումանին): Այ քու ոտիգիտ կոտրվէր ոչ ասօրվան օրը իստէ ոտ տինիր: Տա հի՞նչ սեւ արիր տիւ իմ կլսիս իմ հարսանիքիւ: Վայ վայ վայ, վայ վայ: Վայ դադաշս վայ, վայ: (Նամակը Արքահամը վերցնում է եւ

¹Հայրիկ, ²լուծել, ³նախազգացումն, ⁴փարդաջուր, ⁵մէխակ, ⁶մի հատիկ, ⁷սուզու լաց, ⁸օտար, ⁹չանք, ¹⁰մատալ, ¹¹լաւ, ¹²որբ.

աչից անցնում): Փորը մէշկան¹ կպա'ծ, երգան² բօյիտ³, երգան բեղիս, պլօզ պլօզ աշկերիտ Մկիճիտ մատաղ իլի դադաշ: Տարինի տաճաներկու ամիս մին թաս⁴ ա'րա'զի կարօտ դադաշս վայ: Ուփ Ապէր: Հո՞վ ա տեսալ քի կանանչ կա'րմիւրտ կապած, ջահիլ ջուկան⁵ հարսնացուա կոխկիտ կանած, տիւ հօրտ մէշկին⁶ օխչալթմիշ⁷ անես: Ու'փ Ապէր: տա կարեթ⁸ քիցիլի պա'նա': Հի՞նչ ես կարթըմ: Օրը հի' մնչի՛ւրիւ'զի մն⁹ տրա նրա ցէքին թագվոր դադաշս վայ: Ախ այ քարասըրտ դադաշ, տիւա՛լ մէռնիլի վախմէթ քիթա՛ր: Ու'փ ու'փ: (Խօցայ Արգումանին): Իրէստ պա'րզ. լա'ւ նամակ պէրիր ինձ էտի, հիմի ա'լ առաջիս տաճանոցի սալդաթի¹⁰ մնան եկալ ես կանան՛ւ: Վայ դադաշս վայ:

ԱԲՐԱՀԱՄ

(Մկիճին): Առ'ւս սո'ւս սո'ւս: Այ տաւար, դու որ կարդալ չես կարողանում, էլ ի՞նչ ես էշի նման զոսում, իմ առնաս սուզի տուն շնում:

ՄԿԻՃ

(Դեռ լացակնած): Հի՞նչ ա' կիր'ած:

¹Մէշկից, ²երկար, ³հասակիո, ⁴բանից, ⁵մատանինս նդիս-կին, ⁶ապացնել, ⁷լազիր, ⁸միշ երկեր նուանիթիբ զինոր խողաթղթի.



ԱԲՐԱՀԱՄ

Զահրմար¹ է գրած. կարդա՛ք քոռացած աչքերով. (Կարդում և ինչի): «Դադաշը մեռալ ամէռալ»: (Ցոյց տաղով Մկիճին): Յետո՞յ, կարդա՛:

Մ Կ Ի Ճ

(Կարդում և աչքերը սրբեղով): «Մէռալ ամէռալ, ետ ա եկալ»: (Թուչում և տեղից կարդում և): «Հիմի փառք Աստծոյ բազար է գնում»: (Սասիկ ամաչեղով): Վա՛շ:

ԽՕԶԱՅ ԱՐՁՈՒՄԱՆ

Ես ըրմացալ ըմ. ըտա խւրան ապօ՞րն արթաղըմ: (Մկիճին). Ատա զուռնաշու տղայ, էտ կիրոտ լըհա՛² քու հա՛րա՛³ տուլալ, էտ հիբի՞ մնուաւ:

Մ Կ Ի Ճ

Ա՛ւ սուս արեցէ՛ք քի քիչ էր մնացալ բիա-ըտու⁴ իլինք. լա՛ւ պրծանք: Ասսու պա՛նի ըմանալ չիլիլ, նա ուրախութունիս սուք խանեց, որ ի՛ւրա՛ն չմօռանանք: Փառք ի՛ւրա՛ն. (Ուրախացած): Ա՛վ նա ասալ ա աս' ի՛ւրի՛ւզի՞ւն Մկիճի հարսանիքի իլի, հա՛նց իլիլի՛ւ ա՛ւ ա՛ւ պ'լու:

¹թոյն. ²հեց. ³հայր. ⁴խայտառակ.

ԱԲՐԱՀԱՄ

Չուկը ինօջայ Արզումանը վերցնի եւ խաչեղայր գառնայ: (Խոչայ Արզուման ձուկը վերցնում է միջի դռան ձախ կողմում կանգնում): Ես էլ այսուեղ կանգնեցի (Կանգնում է աջ կողմում. Անրառամ մօմը տախս է Մկիճին, կանգնում է մեջ տեղ): Ապա Մկիճ. մին մեր նախնի գեներալի նման ե՛կ հարսնացուիս կոնակի՛ր գնանք թէ չէ Մարտիրոսի աչքը հիմայ ջուր դառաւ: Դէ հա:

Մ Կ Ի Ճ

Նայալ իմ ցեքիս: (Բեմի առաջի ձախ անկիւնից շապում է միջի դռնով. Արտահամ բուրը հանում է որ նրա զյսին դռան վրա պահի, Մկիճ սասիկ վախենում է եւ յետ յետ զնում):

Պատկեր:



14

4986

